

ՋԻՎԱՆՈՒ ԼԵԶԿԻ ԱՅԼԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գրողի ստեղծագործության գեղարվեստական արժեքը, լեզվի և ոճի առանձնահատկությունները պայմանավորված են ինչպես բառապաշարով, այնպես էլ պատկերավորման և արտահայտչական միջոցների ճկուն և ներդաշնակ գործածությամբ, լեզվի քերականական և շարահյուսական ձևերի ներքին հնարավորությունների ճշգրիտ և ինքնատիպ կիրառմամբ: Գեղարվեստական ստեղծագործությունների մեջ արժարժված երևույթների և հարաբերությունների արտացոլումը ընթերցողի գիտակցության մեջ տեղի է ունենում ոչ միայն իմացական, այլև ապրումային տեսքով, ուստի գեղարվեստական խոսքում արժևորվում է նաև երևույթների, իրավիճակների, զգացական ապրումների հուզական վերարտադրման գործընթացը:

Գրողի լեզուն և ոճը՝ որպես հաղորդակցման անհատական ձևեր, ընթերցողի մեջ զգացմունքներ, հույզեր ու մտքեր արթնացնելու, նրան հեղինակի ապրումներով ու մտքերով տոգորելու միջոց են: Գրողի լեզվի և ոճի կարևորագույն արժանիքներից մեկը խոսքի պատկերավորությունն է, որն ապահովում է ստեղծագործության մեջ նկարագրվող երևույթների, հոգեվիճակների ճշգրիտ և զգացմունքային վերարտադրությունն ու գնահատականը:

Խոսքի պատկերավորության գրողը հասնում է լեզվական զանազան միջոցներով (փոխաբերություն, համեմատություն, մակդիր, այլաբանություն, փոխանունություն, շրջառություն, զուգադրություն (զուգահեռականություն), հեզմանք, չափազանցություն և այլն), որոնց լեզվագիտության մեջ անվանում են այլաբերություններ: Այլաբերությունը իմաստային նմանություն կամ առնչություն ունեցող բառերի միջոցով երևույթի այնպիսի պատկերումն է, որում արտահայտություններն օգտագործվում են իրենց ոչ ուղղակի իմաստով: Այլաբերորեն արտահայտված խոսքի մեջ տեղի է ունենում բառի ուղղակի իմաստի փոփոխություն, որի հետևանքով բառը, ձեռք բերելով անուղղակի իմաստ, նպաստում է խոսքի պատկերավորությանը: Հենվելով բառերի փոխաբերական իմաստի վրա՝ այլաբերությունը նպաստում է ոչ միայն խոսքի պատկերավորությանն ու արտահայտչականությանը, այլև ապահովում է նրա ներգործման, գեղագիտական գործառույթը:

Ջիվանին այն արվեստագետներից է, ում խոսքը ներգործման կարողության շնորհիվ մտել է ժողովրդական լեզվամտածողության և հոգեբանության մեջ: «Ջիվանու երգերն ու բանաստեղծությունները... գաղափարական ու գեղարվեստական որոշակի արժանիքներով օժտված հոյակապ կերտվածքներ են, որոնց մեջ ժողովուրդը տեսել և տեսնում է իր կյանքի արտացոլքը, իր

մտքերի ու զգացմունքների, հույսերի ու ձգտումների բարձր արտահայտությունը»¹։ Լինելով հայ աշուղական բանահյուսության ավանդույթների լավագույն շարունակողն ու զարգացնողը՝ նա իր ժողովրդին վերադարձրեց ազգային երգարվեստի այն նշխարքները, որոնք հայի հոգեկերտվածքի մաս են, բայց ունեին օտարալեզու կատարում և օտարահոգի հնչերանգներ։ Բանաստեղծական խոսքի գրեթե ան առումով Ֆիվանու լեզուն այնքան ժողովրդային ու պատկերավոր է, այնքան հազեցված ժողովրդական լեզվամտածողության տարրերով, որ եթե ոչ տողացի, ապա պատկերային զուգորդությունների միջոցով հեշտությամբ կարելի է վերականգնել նրա ցանկացած ստեղծագործության բովանդակությունն ու իմաստային ուղղվածությունը։ Նա տեսածը և զգացածը բանաստեղծության ու երգի տեսքով այնքան պարզ, մատչելի ու պատկերավոր է ներկայացնում, որ դրանց զգալի մասը (չնայած իրենց այլաբանական բնույթին) այսօր էլ որպես առակներ, ասացվածքներ ու դարձվածքներ հնչում են ժողովրդական խոսքում։ Նրա ստեղծագործություններում պատկերված իրողություններն այնքան դիպուկ, զուներդ ու ճաշակով են մատուցված, որ ընկալելի են բոլորի կողմից։ Եվ դա բնական է, քանի որ Ֆիվանին, լավ ճանաչելով իր ժողովրդին և իմանալով նրա իղծերը, ձգտումներն ու գաղափարները, թե՛ ուրախության և թե՛ դժբախտության պահին լինելով նրա կողքին, գեղարվեստորեն վերարտադրում է դրանք ժողովրդի մտածողությանն ու հոգեբանությանը հարազատ լեզվով ու ոճով։

Ֆիվանու լեզվի պատկերավորության գլխավոր հայտանիշը միտքը ոչ բարդ տրամաբանական կառույցներով, առարկայական համեմատություններով, երևույթների էությունը դիպուկ բնութագրող բովանդակալից զուգադրություններով, անպաճույճ մակդիրներով, ժողովրդական լեզվին հատուկ դարձվածքներով ու ասացվածքներով, համընդհանուր ընկալման արժանացած փոխանունություններով համեմված այլաբանություններով, համաժողովրդական բառերով արտահայտելն է։ Կառուցվածքային և ոճագիտական առումներով Ֆիվանու լեզվին հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ առանձնահատկություններ։ Ինչպես ժողովրդախոսակցական լեզվում, նա ևս խոսքը կառուցում է համադասական հարաբերություններով կապակցված պարզ նախադասություններով, բարդ նախադասությունների դեպքում՝ նախադասության բաղադրիչների շարահարական կապակցության հնչերանգային բազմազանությամբ, գեղչումներով, առանձին բառերի, բառակապակցությունների, նախադասությունների, տողերի, բանաստեղծական տների կրկնություններով։ Սակայն եթե ժողովրդա-խոսակցական լեզուն՝ հետևապես և նրա ոճական դրսևորումները, որպես կանոն, հիմնականում լուծում են առօրյագործառնական խնդիրներ և ժողովրդական բանահյուսությունից դուրս գեղագիտական արժեք չունեն, ապա Ֆիվանու՝ ժողովրդախոսակցական ոճով խոսքը գեղարվեստական արժեք ունի։ Օգտվելով լեզվի գեղարվեստաար-

տահայտչական համակարգի ընծռած հնարավորություններից՝ նա յուրովի է օգտագործում դրանք: Պատկերավորման և արտահայտչական միջոցները նրա խոսքում հանդես են գալիս փոխապակցված և փոխալայնամավորված ձևով: Առանձին-առանձին դրսևորվելուց զատ, դրանցից յուրաքանչյուրը կառուցվածքային բաղադրիչ է և միջոց մյուսի համար: Միատեղ հանդես գալով՝ սրանք կամ բացում, ընդարձակում են միտքը, կամ հակառակը՝ ուղեկցվելով հակադրություններով, դարձվածքներով, ասացվածքներով, գեղչումներով՝ սեղմում, ընդհանրացում են ասելիքը՝ երևույթի նկարագիրը դարձնելով առավել պատկերավոր և տպավորիչ: Գործածվում են գեղարվեստաարտահայտչական միջոցների գրեթե բոլոր տեսակները:

Որևէ երևույթ, իրավիճակ նկարագրելիս Ջիվանին հաճախ դիմում է համեմատությունների: Իմաստի ընդգրկունության առումով՝ նրա բանաստեղծություններում առկա են ինչպես համառոտ, այնպես էլ ծավալուն համեմատություններ: Ըստ համեմատություն ձևավորող բաղադրիչների (համեմատելի, համեմատյալ, համեմատության հիմք կամ հատկանիշ) կապակցման տեսակի՝ հանդիպում ենք *նման, պես, գերթ, որպես, ինչպես, կարծես, հանց, ասես* և այլ կապական բառերով շարակցվող միացությունների (*«Սիրույդ նետերից ընկած եմ թևը կոտրած ծնծղուկի պես»*²: *«Կարդազույն այտերդ միշտ գեղածիծաղ // Քայլքդ կաքավի պես քնքույշ, հայ աղջիկ // ... Պոռույտ գալդ անմեղ աղավաճո նման // Ըարժնուքդ խոհեն, զգույշ, հայ աղջիկ»* (241): *«Աղքատ մարդու սիրտն էլ յուր շորի նման // Թե փործես քնքնես, մաշված կլինի»*³): Չվի կապերով կառուցված այս համեմատություններում լրացնող բառը՝ համեմատյալը, լրացյալի՝ համեմատելիի հետ կապակցվելով՝ բնորոշում է ենթական անմիջականորեն, և տեղի է ունենում նմանության հատկանիշի ուղղակի՝ ոչ միջնորդավորված բացահայտում: Նմանատիպ համեմատությունների կազմություններում երբեմն բացակայում է այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատումը (երկանդամ համեմատություն), իսկ համեմատելին, կապակցվելով որակման իմաստ արտահայտող որևէ բառի (ածական, դերբայ) հետ, մակադրություն է ձևավորում (*«Չախորդ օրերը ծռան նման կուգան ու կերթան //... Դառն ցավերը մարդու վերա չեն մնա երկար // Որպես հաճախորդ չարվեշարան կուգան ու կերթան»* (90): *«Փտեցան գեղեցիկ, անգին օրերս // Քամին քչեց՝ մղեղի պես անցկացան //... երիտասարդության թանկ վայրկյաններս // Թռան կորան անծեղի պես, անցկացան»* (81)): Կապական բառերի միջոցով կառուցվող այս, ինչպես նաև այլ համեմատություններում Ջիվանին համեմատումն իրականացնում է բացահայտ ձևով: Հատկապես այն դեպքերում, երբ համեմատելին իր վրա է վերցնում համեմատյալի գործողությամբ արտահայտվող որևէ դրսևորում, գործողությամբ պայմանավորված նմանության փաստի շեշտադրման առաջնայնությունն էլ թելադրում է համեմատյալի ներքին բնութագիր-հատկանիշի բացակայությունը (որը, փաստորեն,

համեմատության հիմք կարող էր լինել), և համեմատությունը դառնում է երկանդամ: Վերը բերված օրինակներում ականատեսն ենք այդպիսի իրողությունների. ձախորդ օրերը, փորձանքը, հալածանքը, նեղությունը, գեղեցիկ, անզին օրերը, երիտասարդության թանկ վայրկյանները, համեմատվելով համապատասխանաբար ծնունդ, քարավանի, մղեղի (մանրացրած կալի կամ հարդի փոշու), անծեղի (կաշաղակի) հետ, նմանակում են վերջիններիս՝ ընթացքի, շարժման առումով, որի պատճառով էլ ծնունդ սառնությունը կամ ցրտաշունչ լինելը, քարավանի ձգվածությունը, մղեղի թեթևությունը, անծեղի արագաթիռ, սրընթաց լինելը՝ որպես համեմատականների բնութագրեր, բացահայտ չեն շեշտադրվում: Այն դեպքում, երբ համեմատումը կատարվում է զուգորդումների միջոցով (ներքին համեմատություն)՝ զուգահեռներ տանելով համեմատվող երևույթների միջև, Ջիվանին դրանք նույնացնում կամ հակադրում է: Երբ համեմատության եզրերից մեկը որևէ սոցիալական, հոգեկան իրավիճակ, տրամադրություն կամ բնության երևույթ է, համեմատվող եզրերը՝ որպես առանձին կառուցվածքներ, հաճախ ձևավորում են փոխաբերություն, որոնց բաղադրիչներն իրենց հերթին այս կամ այն խոսքի մասերով կառուցվող մակդիրներ կամ տրամաբանական որոշիչներ են: Նման զուգադրությունների օրինակներ կան «Բայաթի» (83), «Ձախորդություն» (92), «Երգ Հայաստանի» (56) բանաստեղծություններում:

Ջիվանու՝ պարզ կառուցվածքով համեմատություններում կան այնպիսիները, որոնցում կամ համեմատելիներն են մեկից ավելի, կամ նույն համեմատյալը բնութագրվում է մեկից ավելի հատկանիշներով (բազմանդամ համեմատություն): Առաջին դեպքում նույն խոսքի մասով արտահայտված համեմատելիները, համեմատյալի որևէ հատկանիշի միջոցով նույնացվելով, դրսևորում են հեղինակի վերաբերմունքը իրենց՝ որպես մեկ ընդհանրացված երևույթի (հասկացության) նկատմամբ («Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը՝ մարդուն // Փայլեցնում է արևի պես պատկերը մարդուն» (171): «Փորձանք, հալածանք և նեղություն ազգերի զլխից // Ինչպես ճանապարհի քարավան կուզան ու կերթան» (90)): Բազմանդամ համեմատություններում, որոնցում համեմատելիին վերագրվող որակները պայմանավորված են համեմատյալների թվով, կարևորվում են համեմատվող առարկայի կամ անձնավորության, երևույթի այն առաջնային հատկանիշները, որոնք Ջիվանին համարում է էական՝ տվյալ համատեքստում համեմատվողին առավել պատկերավոր ներկայացնելու համար («Արտաշեսն էր հայոց մեծ սարի նման // Նա անմաշ սիրտ ուներ լեռ քարի նման // Հերժող թշնամյաց ոչխարի նման // Սնվախ Գայլ Վահանը մոտս է հարկավոր» (98)):

Ծավալուն կամ բազմանդամ համեմատություններում (այս դեպքում համեմատումը կատարվում է ընդարձակ նկարագրությամբ) Ջիվանին գործածում է միջնորդավորող բառակապակցություններ (ընդհուպ ամբողջական

նախադասություններ), որոնք համեմատությունը ձևավորող երկու բաղադրիչների՝ համեմատելիի և համեմատյալի համար հատկանիշը բացահայտող միջոց են: Ընդ որում, միջնորդավորող այդ բառակապակցությունները՝ որպես առանձին միավորներ, իրենք ևս պատկերավորման որևէ միջոց են և նույն շարակարգում համադրվելով՝ բացում կամ ընդարձակում են համեմատությունը: Իմաստի ընդգրկունության տեսանկյունից այս տեսակ համեմատությունները նմանվում են զուգադրությունների, որոնց ամեն մի հատվածն առանձին վերցրած մի ինքնուրույն համեմատություն կամ փոխաբերություն է: Նման դեպքում իրար հաջորդող համեմատությունների միջոցով կատարվում է իմաստի սաստկացում կամ պատկերի ամբողջացում: Համեմատությունների նմանատիպ կառուցվածքներ կան «Սամայի» (168), «Ու՞ր ես, արի» (217), «Ով աշուղ» (105), «Սեր դարը» (47), «Գովեստ գեղեցիկ մազերու» (259), «Գեղեցկուհի» (263) և այլ բանաստեղծություններում: Սիավասիկ պատառիկները դրանցից. «Կեղծ քարոզիչներ ելած են հանդես // Խաբում են շատ մարդու երեխայի պես // Ներքուստ գայլի նման հոտն անում են կես // Արտաքուստ հովվի հետ, տես քոքոանքը //Սի խումբ մարդիկ կան, ողջը բացբերան // Ոչ աստված կհիշեն և ոչ դատաստան // Ձեռքերն ընկածը ճիշտ սագի նման // Կալոկեն խեղճի ողջ զարդարանքը // Սի տեսակ հարուստ կա նման տգորուկի // Կծծի արյունը աղբատ ծերուկի» (47, 48): «Քաղցրաբարո, քնքուշիկ դստրիկս, ու՞ր ես, արի // Հոտավետ վարդ, անուշիկ ծաղիկս, ու՞ր ես, արի // Դու սարերու այծեմնիկ, եղնիկս, ու՞ր ես, արի //.... Ակնավայել հասակդ նոճիի ծառ է սիրուն // Սնարատ, նազելի կույս, ծոցդ՝ դրախտ զարդարուն // Ուրախ դեմքդ, ժպիտդ ցույց է տալիս նոր գարուն // Այրված սրտիս համար վճիտ աղբյուր կարկաչուն // Կարկաչափոս մեկ ջուր ես // Սնապակ, խիստ մաքուր ես // Սասսի կատարից եկած // Ըսպիտակ ծյան փշուր ես //Խայտաճամուկ թիթեռի նման սիրուն խայտացող // Ոսկու պես ծայն արծակող, կլկալով խնդացող // Սավառնաթև, օդաճեն ամպերու հետ խաղացող // Ո՛վ դու հրաշատեսիկ հովիկս, ու՞ր ես, արի» (217, 218): Բերված օրինակներից վերջինում ականատես ենք նաև վերջույթի՝ որպես արտահայտչամիջոցի գործածման, որով Ջիվանին խոսքին հաղորդում է երաժշտականություն՝ միաժամանակ լուծելով ստեղծագործության որթավորման խնդիրը: Գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցների՝ որպես ոճական միավորների գործածման, հանդիպում ենք այլ բանաստեղծություններում ևս: Սասնավորապես «Ով աշուղ» (105) բանաստեղծության մեջ, որն ամբողջությամբ զուգադրության օրինակ է, և որն ուղեկցվում է *երբեմն* ժամանակի մակբայով արտահայտվող հարակրկնությամբ, Ջիվանին մտքերի զուգորդմամբ ներքին համեմատություն է կատարում: Այլաբերորեն արտահայտվող այս ստեղծագործության մեջ առկա են նաև հակադրություններ: Մտքի իմաստն այստեղ փոխաբերական է, հակադրությունները ծառայում են որպես միջոց համեմա-

տություններն իրականացնելու համար («... Քո սրտի նման չէ իմ անահ սիրտս // Երբեմն կպատերազմի քաբաքար // Երբեմն էլ կլինի հողին հավասար // Երբեմն կլինի կարծր՝ չոր երկաթ // Երբեմն կլինի փափուկ մագաղաթ // Երբեմն ոսկի է, երբեմն՝ արծաթ // Երբեմն կդառնա սուրբ սկիհ սիրտս // Երբեմն տիպակ է, երբեմն՝ կաքավ // Երբեմն կլինի խիստ տգեղ ազռավ // Երբեմն կտանի ամեն վիշտ ու ցավ // Երբեմն կխնդրե իրեն մահ սիրտս» (105, 106)): Ծավալուն համեմատություններով ուղեկցվող պատկերներն ունեն առավելապես նկարագրական բնույթ։ Այս դեպքում համեմատության հիմքը ձևավորող իմաստակիր բաղադրիչները (որոնք, ինչպես նշեցինք, հետևանք են մեկից ավելի համեմատյալների առկայության) կարող են լինել ոչ միայն համեմատյալների հիմնական, բնորոշ մշտական հատկանիշներ, այլև անսպասելի, ոչ հիմնական։ Սրանք, որպես կանոն, պայմանավորված են ստեղծագործողի՝ տվյալ երևույթի, անձնավորության, առարկայի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, ինչպես նաև գրողի երևակայությամբ, տվյալ պահին նրա հոգեվիճակով, տրամադրությամբ, ընկալումներով, և կարող են լինել ինչ-որ չափով կամայական, ընդհանուր իրադրությանը ոչ համարժեք։ Նման համեմատությունների նպատակը ոչ թե նմանարկումն է, այլ զուգադրումը, որի պատճառով էլ ավելի նմանվում են զուգահեռականության («Չունիս շեն մնացած մի տուն, մի փողոց // Դարձել ես բուերու ծագոց օրորոց // ... Այրի աղքատ կնոջ նման, խեղճ քաղաք // Հանդերձներդ պատահա-պատահ քո, Անի՝ // Նման ես ջախջախված ծովասույզ մավի» (54, 55)։ «Վերջիս դեղ ու սպեղանին // Ախ, իմ հայրենիքիս ջուրը // Քաղցր ես, քան նուրս գինին // Ախ, իմ հայրենիքիս ջուրը // ... Սղամա խմած ջրից է // Ախ, իմ հայրենիքիս ջուրը // ... Կաթի ու մեղրի համ ունի // Ախ, իմ հայրենիքիս ջուրը» (146, 147)։ «Սայաթ-Նովի ասածի պես ազգի մշակ է երգիչը // Հագար ցավով՝ մարտիրոսված ճիշտ նահատակ է երգիչը // Սառը մարդկանց տաքացնող հատուկ կրակ է երգիչը // Ով ուզում է թող սովորի, տեղով առակ է երգիչը // Արդարության և բարության ծարավ, պապակ է երգիչը // Որովհետև անխարդախ է, սրտով խտակ է երգիչը» (174)։ «Միշտ տոչորված ման եմ գալիս վիզս ծռած խղճուկի պես // Սիրույդ նետերից ընկած եմ թևը կտորած ճնճուկի պես // Լալով օրերս անցնում է որբ մնացած մանուկի պես» (242))։ Նկատենք, որ բերված օրինակներում համեմատումներն ուղեկցվում են զեղարվեստա-արտահայտչական այլ միջոցների՝ մակդիրների, անձնավորման, փոխաբերության, կրկնությունների գործածությամբ։

Զիվանու ստեղծագործություններում իրենց ձևատրամաբանական կառուցված-քով առանձնահատուկ են նաև ժխտական համեմատությունները։ Համեմատությունը ժխտական է, երբ «...միաժամանակ բացասվում է երկու երևույթների նույնությունը և դրանով իսկ ցույց է տրվում նրանց նմանությունը»⁴։ Զևական տրամաբանության տեսանկյունից կարելի է ասել, որ ժխտական համեմատության կառուցման հնարավորությունը հենված է այն

իմպլիկատիվ ասույթի ճշմարտացիության վրա, որ եթե երկու երևույթներ նույնացված չեն, ապա դրանք կարող են ունենալ իրարից տարբեր բնութագրիչներ: Փաստորեն ժխտական համեմատություններում, բացասելով համեմատվող եզրերի նույնությունը, համեմատումն իրականացվում է եզրերը տարբերակող հատկանիշների հիման վրա: Տեղի է ունենում համեմատելի և համեմատյալի այն բնութագրիչների համեմատում, որոնցով դրանք չեն նույնանում: Նման դեպքում հատկապես կարևորվում է համեմատվող երևույթների նկատմամբ հեղինակի վերաբերմունքը: Անձնավորությունների համեմատման պարագայում համեմատությունը սուբյեկտիվ է, քանի որ ոչ թե համընդհանուր ընկալումների կամ ճանաչողության արդյունք է, այլ հեղինակի՝ տվյալ պահին ունեցած զգացումների ու ապրումների հետևանք: Այդ դեպքում ևս համեմատությունը կարող է ուղեկցվել լեզվի այլ գեղարվեստաարտահայտչական միջոցների՝ ռեալան հնարների գործադրմամբ (*«Զաղցած, ծարավ հայ կմնամ մինչ ի մահ// Փառամուլ, ագգուրաց իշխան չեմ լինի// ... Ես չեմ քանդեր ցանկը հայրենի շինած // Անապատի օձին արժան չեմ լինի»* (8)): *«Հայ եմ ծնվել, հայ կմնամ, հայ կմեռնիմ հայի պես // Սև դավաճան, տերը մատնող չեմ լինի Գուդայի պես //... Իմ մոտիկս սիրելով՝ բնավ ուրիշիմ չեմ ատել// Հարևանիս չեմ նախանձիլ, օձի, սատանայի պես // Ո՛վ Ջիվանի, պետք է լինի ճշմարիտ լավ գործիչը // Սաքրակենցաղ սուրբ քարոզիչ՝ բարի քահանայի պես»* (34): *«Թռչի, խայտա ինչպես կայտառ մի մանուկ// ... Ոչ թե թռչնած ծաղկի նման վաղանցուկ»* (136)): Բերված օրինակներում Ջիվանին համեմատությունը կառուցում է չ ժխտական մասնիկի և *պես* կապի միաժամանակյա գործածությամբ, ստեղծում է հակադրություն և այդ հակադրությամբ (որպես օժանդակ արտահայտչամիջոցի) իրականացնում է համեմատությունը՝ համեմատելի և համեմատյալի հակադրվող (չնույնացվող) բնութագրիչների օգնությամբ: Հայը Ջիվանու համար դրական խորհրդանիշ է, որը հակադրում է ազգուրաց իշխանին, Գուդային, օձին, սատանային՝ որպես բացասական խորհրդանիշների, և այդ հակադրությամբ էլ կառուցում է համեմատությունը՝ շեշտադրելով, թե ինչպիսին չի կարելի լինել (եզրերից մեկի բացասում):

Ջիվանու բանաստեղծություններում, հանդիպում ենք նաև համեմատության մի քանի տարատեսակների միաժամանակ: Շատ բանաստեղծություններ էլ ամբողջությամբ համեմատություն են: Այսպես՝ «Կյանքի համեմատություն» (249) բանաստեղծությունը կառուցված է միայն համեմատություններով և բնույթով ներքին համեմատություն է: Բանաստեղծության սկիզբն ու վերջը համադրական սկզբունքով կառուցված համեմատություններ են, որոնցում համեմատումը կատարվում է *սև* որակական ածականի միջոցով (որն ի դեպ, հենց նույն բանաստեղծության մեջ հատկանիշ ցույց տալուց բացի

* Ներքին համեմատության մասին տես օր. 7, էջ 160:

գործածվում է մաև փոխանվանաբար (որպես գոյական)), և որը, որպես համեմատելիի վիճակի բնութագիր, վատի խորհրդանիշ է, իսկ համեմատյալների (սիրեցյալի աչք և ունք, մազեր) համար՝ արտաքին գեղեցկության ցուցանիշ: Բանաստեղծության միջանկյալ մասը կառուցվում է սևի և սպիտակ, ոսկու, արծաթի և երկաթի, ուրախության և տխրության (վերջինս տեքստում գուզորդվում է անկյան հետ) հակադրությամբ արտահայտվող ժխտական բնույթի համեմատություններով (*«Թե քու աչք ու ունքդ սև են, ով չքնաղ // Ես էլ դորանց դեմը բախտ ունիմ շատ սև // Թարթիչներդ թե լույսիդ տան շամանդաղ// Իմ արևս ամպամած է, հաստատ սև // Եթե դու սիրում ես միշտ ուրախություն // Ես էլ կուզեմ առանձնանալ մի անկյուն // Թե որ դու կուրծք ունիս որպես ծերմակ ծյուն // Իմ էլ մազերուս մեջ չըկա մեկ հատ սև // Դուն փայլում ես ոսկու, արծաթի նման // Իմ էլ կյանքս է ժանգոտ երկաթի նման// Թե դու մազեր ունիս սև սաթի նման // Ես էլ օրեր ունիմ տեսնելու վատ, սև»*):

Զիվանու բանաստեղծություններում շատ են փոխաբերությունները: «Փոխաբերությունը այլաբերության մի տարատեսակ է, երբ բառերը կամ արտահայտությունները իրենց ուղիղ, բառարանային իմաստի փոխարեն գործածվում են նոր բովանդակությամբ, որը բառը կամ արտահայտությունը ստանում է նոր բառերի շրջապատում, իր համար նոր, անսովոր շարակարգում»⁵ - գրում է Լ. Եզեկյանը: Փոխաբերությունները Զիվանու պոեզիայում գուզորդումների և համեմատումների հետևանք են, որակումների և պարզաբանումների միջոց: Այդ է պատճառը, որ Զիվանու բանաստեղծություններում փոխաբերությունների հիմքում հաճախ ընկած են պատկերավորման այլ միջոցներ ևս, որոնք ուժեղացնում են խոսքի հուզական ներգործությունը: Փոխաբերությունների կառուցվածքում շատ են հատկապես անձնավորումը և խորհրդանիշը, որոնք թեմատիկ ընդհանրություններով պայմանավորված՝ ասես դասակարգված ձևով են հանդես գալիս: Խորհրդանիշները դրսևորվում են հիմնականում գույների, բնության առարկաների ու երևույթների, ժողովրդական համընդհանուր ընկալում ունեցող հասկացությունների միջոցով (*«Սևեր հագած մստեր կուլա // Տրտում, տխուր Դայաստանը//...Արտի վրա ունի ցցված// Երկսայրի սուր Դայաստանը//...Կարմիր բորենին բռնակալ// Զի ցանկանում ծանապարհ տալ»*) (161): *«Անույժ ծնուն արև դարձավ վառարանը հայոց բախտին //Բերանը բաց մայում է խոր գերեզմանը հայոց բախտին»* (168): *«Արդար դատավոր, փրկե դու մեզ չար մեռի ծեռքից // Կարմիր հրեշի, բիրտ բորենու, վատ սեռի ծեռքից // Կենսատու գարուն, մի ուշանա, սեղմել է ցուրտը// Դասիր, ազատիր մերկ տղայոց ծմեռի ծեռքից»* (49): *«Զի վերացավ մեր վերայից գիշերը // Անվառ մնաց Դայաստանի լապտերը»* (53): *«Զմեռ դառավ ծեր գարունը// Կորուցիք Դայկա անունը»* (56): *«Նայում եմ երկնքին՝ խավար, սև հագած//...Ծովը ալեկոծված, քարերը կուլան //Գարշ ծայներ է հանում անդունդը խորը // Անգութ մահը բաց է արել որկորը»* (104): Բերված

օրինակներում սևը, կարմիրը, ծմեռը, գիշերը դժբախտության, ծանր կացության, թշնամու խորհրդանիշներ են, իսկ արևը, գարունը՝ հույսի, փրկության:

Խորհրդանիշների վառ օրինակների համդիպում ենք Ջիվանու՝ այլաբանական բնույթի ստեղծագործություններում, որտեղ փոխաբերական իմաստով գործածվում են ոչ միայն առանձին բառեր, այլև բառակապակցություններ՝ Այլաբանական իմաստով գրված ստեղծագործություններում պատկերավորման միջոցները, հանդես գալով միավորված ձևով, ստեղծում են ամբողջական, ընդհանրացված պատկերներ: Դրանք դառնում են հեղինակի անձնական տեսակետներն արտահայտող տարատեսակ միջոցներ և լիովին բացահայտում են ստեղծագործողի աշխարհայացքը, մտածողությունը, երևակայությունը, արժեքային համակարգը: Հայրենիքին, ազգին, հային և դրանց հետ կապված շատ երևույթների ու հասկացությունների վերաբերող խոհափիլիսոփայական և խրատական բանաստեղծություններում ընդհանրացվում են հայ ժողովրդի ըմբռնումներն ու պատկերացումները: Փոխաբերաբար գործածված բառերի ու բառակապակցությունների համադրությամբ կառուցված այլաբանական խոսքը երբեմն ուղեկցվում է պարզաբանումներով, լրացուցիչ մեկնաբանություններով, որոնցով Ջիվանին՝ մի կողմից բացում, առավել ըմբռնելի է դարձնում խոսքը, մյուս կողմից՝ տալիս է նկարագրվող երևույթի տրոհված, բացված պատկերը՝ ներքին կապերով ու առանձնահատկություններով: «Ծիրանի ծառ» (35), «Դալենտներ» (49), «Պաստան» (56), «Զիթենին» (58), «Խելքի արի, թուրք հարևան....» (109), «Հազար ափսոս» (122), «Ֆեսը» (116) բանաստեղծություններում Ջիվանին այլաբանական պատկերներով, ժողովրդական մտածողությանը բնորոշ արտահայտչամիջոցներով բնութագրում է հայ ազգը, նրա իրավիճակը: Ներկայացնելով իր բողոքը աշխարհին, բախտին, աստծուն՝ բանաստեղծ-աշուղը փոխաբերությունների և համեմատությունների նուրբ համադրություններով՝ Հայաստանն ու հայ ազգը պատկերում է դրախտի, Ադամա այգու, ծիրանի ծառի, արևելյան փայլուն աստղի, չնաշխարհիկ գոհարի, լուստ ողբու խորհրդանիշներով: Դրան զուգահեռ նա բնութագրում է թշնամիներին՝ ստեղծելով հակադրություն, որով ավելի է ընդգծում հայ ժողովրդի և հայրենիքի արժանիքները («Ես մի ծառ եմ ծիրանի // Հին արմատ եմ անվանի //Զորս հազար տարվա ծառ եմ // Սարմինս պինդ, կայտառ եմ» (35): «Քեզնից դժգոհ եմ, բախտի թագավոր // Ինչու՞ առաքինը վերջին արիոր դու // Արևելյան փայլուն աստղը զորավոր // Կտրատեցիր, կիսալուսին արիոր դու» (56), «Խելքի արի թուրք հարևան // Հային ոչխար մի իմանա // Նա չի լինի եղբայրասպան // Քեզ պես տխմար մի իմանա //Հայը պայծառ ասղածին է // Նրան խավար մի իմանա //.... Արիական շառավիղ է // Հային թաթար մի իմանա //Հայի մոտը դու մեկ ծու ես // Դու քեզ պինդ քար մի իմանա» (109)): Ամբողջությամբ այլաբանություն է «Ֆեսը» բանաստեղծությունը, Ջիվանին բնութագրում է թուրքին՝ իր վարքագծով ու էությամբ: Ֆեսը թուրքն է, նրա

խորհրդանիշը, որը դարձել է բանաստեղծության հիմքը կազմող բանալի-բառը և հանդես է գալիս և՛ որպես հասկացություն, և՛ որպես արտահայտչամիջոց (կրկնության տեսքով), և՛ որպես ռիթմավորման միջոց (հանգավորող բառ): Ուշագրավ են նաև *Ֆես* բառի հետ գործածվող մյուս բառ-հասկացությունները: որոնց մի մասը համատեքստին համահունչ ընտրված օտարաբանություններ են և ուժեղացնում են «*Ֆեսի*» նկարագիրը («*էլ չեմ սիրում, ատեցի կարմիր գույնի ալ ֆեսը // Սիագին աղմուկ հանեց, արավ դալմադալ ֆեսը // Իմ եղբարցս արյունով ներկված ծալ-ծալ Ֆեսը // Չեմ կարող գլխիս դնել մեղքերու ջրվալ ֆեսը // Թեթև բրդից հորինված հինգ-տասը մսխալ ֆեսը // Դարձավ ծանր, ահագին երկաթե կուպալ, ֆեսը //Արյունարբու թունավոր օձ ու ռիսակյալ ֆեսը //Դարձել է բյուր ծականի ցնցոտի հին շալ, ֆեսը //Ողջ աշխարհից հարգված գլխիս շլապա ունիմ // Ինչ եմ անում հնացած, անկար, անշուկալ ֆեսը» (116, 117)):*

Ձիվանու խոսքի այլաբերական համակարգում առանձնակի դեր ունեն շրջասությունները, մակդիրները: Որպես առարկան, անձնավորությանը, գործողությունը անուղղակիորեն անվանող կապակցություններ՝ Ձիվանու շրջասությունների շարքում հանդիպում ենք ինչպես կայուն շրջասական կապակցությունների (ազգային բլբուլ (422), աֆրոդիտյան ախտ (197), աֆրոդիտյան թագուհի (313), Բաքուսի աղջիկներին առնել (434), Բաքուսին ուխտ գնալ (351), Դայոց եղիա (415), Դայոց նահապետ (416), մեծ եղբայր, Սորփեոսի գիրկն ընկնել (96), չորս չափ կտավ (202), սեգ սեռ (257), սպիտակ պատանք (68))⁶, այնպես էլ տվյալ համատեքստի շրջանակներում կոնկրետ իմաստին համահունչ շրջասությունների: Վերջիններիս ընկալումն ընդհանրական դարձնելու նպատակով Ձիվանին նույն ստեղծագործության մեջ, որպես կանոն, տալիս է լրացուցիչ մեկնաբանություններ, որոնց միջոցով կռահելի է դառնում, թե ինչի՝ կամ ում մասին է խոսքը: Նման ստեղծագործություններում երբեմն վերնագիրն է հուշում շրջասության ընկալման միարժեքությունը: Սասնավորապես «Կրոնապետ» (62), «Դայոց Դայրիկի մահվան առթիվ» (420) բանաստեղծություններում, անգամ վերնագիրն անտեսելու դեպքում էլ, *արևելյան կրոնապետ, ծիրանազարդ րաբբունի, սևաբախտ ծերունի, ծիրանազարդ հայրապետ* կապակցությունների միջոցով ընկալվում է հորիմյան Դայրիկը, իսկ «Արև» (74) բանաստեղծության մեջ գործածվող *քերմության մայր, անշեջ կրակ, լուսածաճանչ փայլուն պսակ* կապակցությունները միարժեքորեն զուգորդվում են արևի հետ: Պարզաբանումներով ուղեկցվող շրջասության օրինակ է «Ձախորդություն, քեզնից փախա // Եկար գտար ծարեցիր ինձ //Ծիշտ պարսկական պատիժ տվիր // Տաք երկաթով խարեցիր ինձ» (92) տողերում գործածված *պարսկական պատիժ* (կամ *պարսկական պատիժ տալ*) կապակցությունը:

Մակդիրները, որպես Ջիվանու խոսքում գործածվող պատկերավորման միջոցներ, առարկայի կամ երևույթի բնորոշում տալուց զատ, նաև հեղինակի երևակայության և մտածողության դրսևորումներ են: Մակդիրները բնորոշող այս համգամանքը հաշվի առնելով՝ Ա. Մարությանը նշում է. «Մակդիրը, ըստ էության, գրողի գեղարվեստական մտածողության, նրա ստեղծագործական ընկալման արդյունք է և կրում է անհատական բնույթ, այսինքն՝ ունի սուբյեկտիվ կողմ: Պատահական չէ, որ նոր ու թարմ մակդիրները հիմնականում ստեղծվում են նոր բառակերտումներով՝ հեղինակային նորաբանություններով, որոնք դառնում են բառ-պատկերներ և մեծ մասամբ դիպվածային բնույթ են կրում»⁷: Մակդիրների միջոցով Ջիվանին դրսևորում է մտքի խորություն, ներկայանում է ընթերցողին որպես ինքնատիպ արվեստագետ (կենդանի մարտիրոս, կենդանի նահատակ, անբիծ հավատ, պայծառ աստղածին, արիական շառավիղ, փակված առեղծված, հոգեբուխ ավերակներ, աստղադիտաց սրտեր, սգազգյաց սոխակներ, բարձրացուցիչ ապաստան, մաքրակենցաղ սուրբ քարոզիչ, սրբակենցաղ վարք ու բարք, մահաշունչ քամի, հեզասյուրք գեփյուռ, քաղցրաձայն հովիկ, հաշտության հոգի, մահառիթ գերանդի, բարության սուրբ ծանապարհ, բախտի լուսարփի և այլն):

Այսպիսով, ընդհանրացնելով ասվածը՝ կարելի է միարժեքորեն հաստատել, որ Ջիվանու այլաբերորեն արտահայտված խոսքի գլխավոր առանձնահատկությունը լեզվի գեղարվեստաարտահայտչական միջոցների փոխկապակցված գործածությունն է, որն էլ այն դարձնում է առավել պատկերավոր ու արտահայտիչ:

Ծանոթագրություններ

1. Ս. Սուրադյան, Գրական հանգրվաններ, Գիրք Ա, Երևան, 2003, էջ 93:
2. Ջիվանի, Երգեր, Գրական-գեղարվեստական հրատարակություն, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1988, էջ 242: Գրքից մյուս մեջբերումները նշված են փակագծերում:
3. Ջիվանի, Անհայտ երգեր (բանաստեղծություններ), Աշխատասիրությամբ՝ Թ. Պողոսյանի, Երևան, «Հայաստան» հրատ., 1996, էջ 72: Գրքից մյուս մեջբերումները նշված են փակագծերում՝ ընդգծումներով:
4. Էդ. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Երևան, 1980, էջ 230:
5. Լ. Եզեկյան, Բաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Երևան, 1980, էջ 185:
6. Պ. Բեդիրյան, Հայերեն շրջասությունների բառարան, Երևան, «Էդիտ պրինտ», 2006:
7. Ա. Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, «Նաիրի» հրատ., 2000, էջ 150: